

և թե՛ Սարուխանի հիշատակած տպագիր գրքերը հիմնականում վանանդեցիների հրատարակությանն են: Ոչ Մակլերը, ոչ էլ Սարուխանը ցույց չեն տալիս 1692, 1712 և 1718 թվականները կրող ան «Շարակնոց»-ներից դեռևս մեկը, որոնց տիտղոսաթերթերում իբրև տպագրության վայր նշված է Ամստերդամը: Սարուխանի վկայությամբ Ամստերդամի համալսարանի գրադարանում պահվող հնատիպ գրքերի մի մասը կրկնօրինակներ են (օրինակ, «Պատկերասեր պատկերատեսաց» գրքից գտնվել է 18 հատ)¹⁵: Հաղիվ թե Ամստերդամում երեք անգամ տպագրվեց «Շարակնոց» և ոչ մի օրինակ մնացած չլինե՞ր այնուհետ:

Այսպիսով, Ամստերդամի անունը կրող 1692 թ. «Շարակնոցը», մեր կարծիքով Կ. Պոլսի հայ-կաթոլիկ տպարանի ամենավաղ թվական կրող գիրքն է:

1696 թ. հրատարակվել է երկու գիրք, որոնց վրա իբրև հրատարակության վայր նշված է Իտալիայի Լիվոռնո (Ալիկոռնա) քաղաքը: Դրանք են.

«Գիրք Բեռակնությունեան արարեալ և շարադրեցեալ ի Խաչատուրէ Արքրումեցոյ... յԱլիկոռնայ քաղաքի: Ներ բռնում փրկչին 1696, իսկ Հայոց ՌՃԽԷ, մարտի Գ: Հրամանա մեծաւորաց»:
«Գիրք պատմութեան կայսերն Փոցիսեանս... ի յԱլիկոռնայ քաղաքի. քվեռ փրկչին 1696. և Հայոց 1145 մայիսի 25»:

Այս գրքերից առաջինում, բացի հեղինակի՝ Խաչատուր Էրզրումեցու անունից, կա նաև սրբազորդի և վկայությանը գրող Հովհաննես վարդապետ Կաֆայեցու անունը, իսկ երկրորդ գրքի փոքրիկ հիշատակարանում բերված են միայն հրատարակչի անվան սկզբնատառերը՝ «Հոգաբարձութեամբ, ծախիւք եւ սրբազորութեամբ նուստ ունեմն Մ. Ս. Դ.»:

Մեկ տարի ընդմիջումից հետո, 1698 թ. այս տպարանում լույս են ընծայվում հետևյալ չորս գրքերը.

«Բառգիրք Հայոց. Արարեալ ի սուրբ Էջմիածին երեմիայ վարդապետէ: ... ի յԱլիկոռնայ, քաղաքի. եւ քվեռնութեանս հայոց ՌՃԽԷ. յունիս Ժ եւ ի քվին փրկչին, 1698 յունիսի Ժ»:

«Գիրք Աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք: Ի սուրբ Էջմիածին երեմիայ վարդապետէ... եւ քվեռնութեանս Հայոց ՌՃԽԷ. յունիսի Ժ եւ ի քվին փրկչին 1698 յունիսի Ժ»:

«Գիրք շնորհօք... ըսկիզբն եղաք երաշտական երգս շարականաց... Տպեցեալ Յամուկլոտամում քաղաքի: Ռուի փրկչին 1698-ին Յամեսանն յունիսի ԻԲ, իսկ հայոց ՌՃԽԷ...»:

«Գիրք խոստովանութեանց... Հոգաբարձութեամբ Աստուածատուրի Ագուլեաց Դաշտեցոյ... քուռ փրկչին ՌՌՂԸ եւ Հայոց ՌՃԽԷ: Ի Կոստանդինուպոլիս»:

Սրանք բոլորն էլ թեև տպագրվել են Կ. Պոլսում, միևնույն տպարանում, բայց միայն մեկի՝ «Գիրք խոստովանութեանցի» վրա է «Կ. Պոլս» նշված:

«Բառգիրքը» և «Շարակնոցը» տպագրել է Սարգիս Սահեթճին: Այս առթիվ Գ. Դաշտեցու լայնը գրում է. «Միտ դնելու է նաև՝ որ միևնույն Սահեթճի Սարգիսը 1698 յունիսի 10-ին Լիվոռնոյի մէջ Բառգիրք կը տպէ և նոյն տարին յունիսի 22-ին Ամստերդամ կը տպէ Շարակնոց. երկու ստուար գրքեր 42 օրուան մէջ սկսե՞ր է տպել իրարմէ իբր երկու ամսուան հետո քաղաքներու մէջ: Ինձ համար ստույգ է, որ Սարգիս եպ. այս միջոցին Պոլսէն մեկնած չէր»¹⁶:

Սարգիս Սահեթճին վճռական դեր է խաղացել հայ կաթոլիկների տպարանի հիմնադրման և գործունեության հարցում¹⁷: Իր Սիմեոն անունով աշակերտի հետ նա հետագայում ևս հրատարակում է գրքեր, որոնց մասին խոսք կլինի ստորև:

«Գիրք աշխարհացի» հրատարակիչը երեմիա Մեղրեցին է: Հայտնի է, որ «Բառգիրքը» հեղինակելուց բացի Մեղրեցին գրազվել է տպագրական-հրատարակչական գործով:

1698 թ. հրատարակված գրքերից չորրորդի՝ «Գիրք խոստովանութեանցի» անվանաթերթում նշված է հրատարակիչը միայն. «Հոգաբարձութեամբ Աստուածատուր Ագուլեաց Դաշտեցոյ»: Որ «Հոգաբարձութեամբ» բառը այստեղ ճախերը հոգացողի և հրատարակչի իմաստ ունի, երևում է 1703 թվականի «Կտակգիրք»-ից: Այս գիրքը տպագրվել է Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանում, իսկ ծախսերը հոգացել և հրատարակել է Աստուածատուր Ագուլեաց Դաշտեցին:

15 Ա. Ռ. Սարուխան, Հովանդան և Հայերը, էջ 182:

16 Գ. Լ. Դաշտեցու երեսն, Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու, էջ 84:

17 Սարգիս Սահեթճուն շղեպը է շփոթել 1701—1702 թվականներին «Տոնացոյց»-ի տպագրությամբ հանդես եկած Սարգիս Դպրի հետ, որի տպարանն իր որդի Սարտիրոս Դպրի ջանքերով հարատևել է մինչև 1750-ական թթ.: